Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
հուլիսի 23-ի N 797 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՍԵՅՍՄԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ 2015-2030 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Ի.ԾՐԱԳՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գոյություն ունեցող հանրակրթական դպրոցների գերակշռող մեծամասնությունը նախագծվել և կառուցվել են մինչև 1988 թվականը, և նրանց նախագծման հիմքում ընդունված սեյսմիկ ուժերը անհամեմատ ցածր են սպասվելիք ուժերից: Այդ է վկայում Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության (ՍՊԱԾ) կողմից 1998 թվականին կազմված և հաստատված Հայաստանի Հանրապետության տարածքի սեյսմիկ գոտիացման (շրջանացման) նոր քարտեզը: Քանի որ Հայաստանի տարածքում մինչև 1988 թվականը կառուցված դպրոցական շենքերի ու շինությունների նախագծային սեյսմակայունությունը ընդունված է եղել 7-8 բալ ըստ երկրաշարժերի ուժգնության MSK-64 սանդղակի, իսկ Հայաստանի տարածքը գտնվում է առաջինից-երրորդ սեյսմիկ գոտում՝ գետնի սպասվելիք առավելագույն Amax=0.2-0.4g արագացումով (8-ից մինչև 9 բալ և ավելի) ապա ակնհայտ է դառնում, որ տարածաշրջանի հնարավոր ուժեղ երկրաշարժի դեպքում (5.5 և ավելի մագնիտուդով) տեղի կունենան բազմաթիվ դպրոցական շենքերի և շինությունների կամ նրանց առանձին մասերի փլուզում, որը կբերի մեծ թվով հնարավոր զոհերի և նյութական մեծ կորուստների:

II. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2. 1988թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքների վերլուծությունը ցույց տվեց, որ Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեցող շենքերի գերակշռող մասի սեյսմակայունությունն ավելի ցածր է, քան սպասվող սեյսմիկ վտանգի մակարդակը, և Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը գտնվում է բարձր սեյսմիկ ռիսկի գոտում:

3. 1989 թվականից սեյսմիկ ռիսկի նվազեցմանն ուղղված մեծ ծավալի աշխատանքներ են իրականացվել Հայաստանի Հանրապետության հյուսիսային շրջաններում: Կատարվել է շենքերի և շինությունների դասակարգում ըստ վնասվածության աստիճանի, ապամոնտաժվել են վթարային շենքերն ու շինությունները, իսկ չափավոր և զգալի վնասվածքներ ունեցողները՝ վերականգնվել և ուժեղացվել են: Միաժամանակ Երևանն ու Հայաստանի Հանրապետության մնացած մարզերը, որոնք նույնպես ընկած են բարձր սեյսմիկ ռիսկի գոտիներում, բավական անտեսվել են:

4. Սեյսմիկ ռիսկի նվազեցումը գտնվում է Հայաստանի Հանրապետության կառավարության ուշադրության կենտրոնում և 1999 թվականին ընդունվել են Հայաստանի Հանրապետության կառավարության երկու որոշումներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի սեյսմիկ ռիսկի նվազեցման պետական համալիր ծրագրերի կատարմանը (Հայաստանի Հանրապետության կառավարության 07.06.99թ. № 392-Ն և 10.06.99թ. № 429-Ն որոշումներ): Նշված ծրագրերի շրջանակներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Հայաստանի Հանրապետության տարածքում սեյսմիկ պաշտպանության տեսակետից հատուկ և կարևոր նշանակության օբյեկտների սեյսմիկ խոցելիության

նվազեցմանը, այդ թվում նաև հանրակրթական դպրոցներին: Սույն ծրագիրը միաժամանակ կօժանդակի Աղետների ռիսկի նվազեցման ազգային ծրագրի իրականացմանը՝ բարելավելով դպրոցների սեյսմիկ անվտանգությունը, որպեսզի նվազեցվեն դպրոցներում հնարավոր զոհերը և վնասները երկրաշարժերի ժամանակ, և ավելի լավ հնարավորություն ստեղծվի դպրոցների շենքերը երկրաշարժից հետո որպես ընդհանուր հանրության համար կացարաններ և արտակարգ իրավիճակների արձագանքման կետեր օգտագործելու համար: Ծրագիրն արտացոլում է Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարությամբ սահմանված հիմնական ոլորտները և համահունչ է Սենդայի Աղետների ռիսկի նվազեցման 2015-2030թթ. ծրագրի չորս գերակայություններին, որոնք են, մասնավորապես՝ (i) աղետների ռիսկերի մասին պատկերացումը, (ii) աղետների ռիսկերի կառավարման հզորացումը աղետների ռիսկերը կառավարելու նպատակով, (iii) աղետների նվազեցման ուղղությամբ ներդրումների կատարումը՝ կայունության նպատակով, և (iv) աղետների դեպքում պատրաստվածության ուժեղացումն արդյունավետ արձագանքնման համար, ինչպես նաև լավագույն որակի օբյեկտների վերականգնման հասկացությունը վերականգնման, և վերակառուցման գործում:

5. Ներկայումս Հայաստանի Հանրապետության համար սեյսմիկ ռիսկը հասել է իր առավելագույն մակարդակին ամբողջ պատմության ընթացքում, ինչը պայմանավորված է սեյսմիկ ակտիվության նոր փուլով, շենքերի և շինությունների ցածր սեյսմակայունությամբ, ուրբանիզացման բարձր մակարդակով, հատուկ և կարևոր նշանակության շինություններին (քիմիական գործարաններ, հիդրոէլեկտրակայաններ, ջերմաէլեկրակայաններ, բազմաբնակարան բնակելի շենքեր, դպրոցներ, ջրամբարներ, կենսապահովման գծեր, առողջապահական հիմնարկներ և այլն) հատկացված ոչ բավարար ուշադրությամբ, բնակչության վատ տեղեկացմամբ, սոցիալ-տնտեսական վիճակով և այլ գործոններով: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության կողմից ընդունվել են բազմաթիվ օրենքներ և որոշումներ

ուղղված ազգաբնակչության առողջության ու անվտանգության ապահովմանը, սակայն շատ խնդիրներ այս բնագավառում դեռևս մնում են չլուծված, մասնավորապես դպրոցների շենքերի ու շինությունների բարձր խոցելիությունը:

III. ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

6. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի N 46 արձանագրային որոշման ցանկերի՝ Հայաստանի Հանրապետությունում առաջնահերթ հիմնանորոգման, վերակառուցման, ուժեղացման և արդիականացման կարիք ունեն շուրջ 593 կրթական օբյեկտ:

7. ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի Երևանյան գրասենյակի օժանդակությամբ մշակված սեյսմակայունության առումով խոցելիության սահմանման չափանիշների համաձայն և ելնելով դպրոցների ուսումնական մասնաշենքերի հիմնականում ծավալահատակագծային, կոնստրուկտիվ լուծումներից և հարկայնությունից, դպրոցների շենքերը դասակարգվել են հետևյալ 5 տիպերի (A, B, C, D1, D2)՝

A. Քարե շարվածքից կրող պատեր, կոմպլեքսային կոնստրուկցիա,

B. Արտաքին կրող պատեր, ներքին ե/բ հավաքովի կամ միաձույլ կարկաս,

C. Արտաքին ե/բ կարկաս, ներքին հավաքովի ե/բ կրող պատեր,

D1. Հավաքովի երկհարկ ե/բ կարկաս (ԻԻՍ-04 սերիա),

D2. Հավաքովի եռահարկ ե/բ կարկաս (ԻԻՍ-04 սերիա):

Գոյություն ունեցող տիպարային դպրոցների շենքերի և շինությունների հետազոտությունից և նախագծերի վերլուծություններից պարզվել է, որ C տիպի շենքերին ունեն բարձր սեյսմիկ խոցելիության աստիճան և տնտեսապես արդյունավետ չէ դրանց վերակառուցումը: Կարևորագույն խնդիր է մյուս տիպի դպրոցական շենքերի համար ուժեղացման կամ

վերակառուցման ծրագրի իրականացման աշխատանքները՝ հաշվի առնելով վերջին երկրաշարժերի հետևանքներն ու կուտակված փորձը:

Համաձայն ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի Երևանյան գրասենյակի կողմից սահմանված սեյսմիկ անվտանգության չափանիշների, դպրոցներին՝ սեյսմիկ անվտանգության տեսակետից տրվել են հետևյալ գնահատականները՝

- անվտանգության բարձր մակարդակ ունեցող դպրոցներ՝ մինչև 14.25
- անվտանգության միջին մակարդակ ունեցող դպրոցներ՝ 14.25-29.75
- անվտանգության ցածր մակարդակ ունեցող դպրոցներ՝ 29.75-56.00

8. Հայաստանի Հանրապետությունում առկա շուրջ 1400 դպրոցներից 1165-ը ունեն 15-ից բարձր անվտանգության գնահատական, որոնցից թվով 377-ը՝ 40-ից բարձր անվտանգության գնահատական: Վերջիններս համարվում են սեյսմիկ անվտանգության տեսակետից բարելավման անհրաժեշտություն ունեցող առաջնահերթ դպրոցներ: Դպրոցների ուժեղացման համար անհրաժեշտ է շուրջ 1.2 միլիարդ ԱՄՆ դոլար:

Շուրջ 284 դպրոցների հիմնական մասը կառուցվել է Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո, իսկ մյուս մասը՝ վերանորոգվել կամ ուժեղացվել են: Գերակա համարվող թվով 377 դպրոցների ուժեղացման կամ նորի կառուցման համար, նախնական գնահատականներով, պահանջվում է 617.0 միլիոն ԱՄՆ դոլար՝ ընդհանուր գնահատված արժեքով:

Ներկայումս կան Հայաստանի Հանրապետության կառավարության և գործընկեր կազմակերպությունների կողմից պատրաստված տարբեր ներդրումային ծրագրեր, որոնք կենտրոնացված են դպրոցների տարբեր տեսակների վրա (տարրական, միջնակարգ կամ ավագ դպրոցներ) կամ ըստ նրանց տեղակայության (Երևան կամ այլ մարզեր)՝ գերակայության սահմանման տարբեր չափանիշներով:

9. Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատվելուց հետո անհրաժեշտություն կառաջանա, որպեսզի նոր

մարզերի և համայնքների զարգացման նոր կազվող ծրագրերում ընդգրկվեն սեյսմիկ տեսակետից խոցելի դպրոցները:

IV.ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Ծրագրի ազդեցությունը համապատասխանեցվել է Աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարությանը: Վերջնական արդյունքն է սեյսմակայունության տեսակետից անվտանգ դպրոցների շենքերի բարելավված ծածկույթը: Հիմնական արդյունքների ոլորտները և ուղղակի արդյունքները ամփոփ ներկայացված են ստորև:

(i) **Արդյունքների ոլորտ 1. Դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացում.** Ծրագրի շրջանակներում շուրջ 377 գերակա դպրոցների շենքերը կուժեղացվեն կամ կկառուցվեն նորերը՝ համաձայն վերանայված շինարարական նորմերի և դպրոցների շենքերի ուժեղացման ուղեցույցների: Ուժեղացված կամ վերանորոգված դպրոցների շենքերը կհամապատասխանեն Մեդվեդև-Սպոնհոյեր-Կարնիկ (ՄՍԿ/MSK) երկրաշարժերի ուժգնության սանդղակի 9 (IX) բալ ուժգնությամբ երկրաշարժի համար միջազգայնորեն ընդունված սեյսմիկ անվտանգության նորմերին: Ուժեղացված կամ վերանորոգված դպրոցների շենքերը նաև կհամապատասխանեն էներգիայի արդյունավետության մասով կառավարության սահմանած պահանջներին, կունենան հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժի հնարավորություն կամ ներառականության պահանջներին համապատասխանություն:

(ii) **Արդյունքների ոլորտ 2. Սեյսմիկ աղետների պատրաստվածության և արձագանքման կարողությունների հզորացում.** Կմշակվի արտակարգ իրավիճակներին արձագանքման գործողությունների ծրագիր ՍԱԲԾ շրջանակում ուժեղացված կամ վերանորոգված յուրաքանչյուր դպրոցի համար: Իրազեկման քարոզարշավներ կիրականացվեն շուրջ 377 դպրոցներն ընդգրկող համայնքներում: Ազգային դիտացանցի սեյսմիկ

մոնիտորինգի համալիր դիտակետերն արդիականացնելու նպատակով կտրամադրվեն սարքավորումներ և բացի այդ նշված դիտակետերի աշխատակիցները կանցնեն վերապատրաստում սեյսմիկ մոնիտորինգի և կանխատեսումների կարողությունները բարելավելու նպատակով: Կիրականացվեն սեյսմիկ վտանգի գնահատման հավանականային քարտեզի թարմացման և սեյսմիկ ռիսկերի գնահատման աշխատանքներ:

(iii) **Արդյունքների ոլորտ 3. Սեյսմիկ աղետների ռիսկերի կառավարման և նվազեցման օժանդակող քաղաքականությունների և համակարգերի բարելավում.** Ծրագրի շրջանակներում կիրականացվի երկրի շինարարական նորմերի վերանայման և թարմացման աշխատանքներ՝ դրանք սեյսմիկ անվտանգության միջազգային նորմերին համապատասխանեցնելու նպատակով, միջազգային լավագույն փորձին համահունչ դպրոցների շենքերի ուժեղացման, ուղեցույցների մշակման, դպրոցների սեյսմիկ անվտանգության ներդրումային ծրագրի վերանայման նպատակով: Կիրականացվեն մասնագիտական վերապատրաստման դասընթացներ շինարարական աշխատանքների կառավարիչների և աշխատողների համար՝ նրանց սեյսմիկ ուժեղացման շինարարական տեխնոլոգիաները, տեխնիկաները և հմտությունները բարելավելու նպատակով:

11.Ծրագրի առաջնային շահառուները կլինեն շուրջ 147,870 աշակերտներ, ուսուցիչներ և դպրոցի այլ աշխատակիցներ: Բացի այդ, ուժեղացված և վերակառուցված դպրոցների շենքերից կօգտվեն նաև դպրոցներին շուրջ ապրող 450,000 բնակիչ, որոնց կտրամադրվի ժամանակավոր կացարաններ սեյսմիկ իրադարձությունների և արտակարգ իրավիճակների ժամանակ, ինչպես նաև իրազեկման ծրագրեր, ինչը նրանց հնարավորություն կտա իրենց տները դարձնել ավելի անվտանգ և ավելի լավ արձագանքել աղետների ժամանակ:

12. **Ծրագրի ծախսեր.** Ծրագրի ծախսերը 2015-2030թթ. համար գնահատվել են 617.0 միլիոն ԱՄՆ դոլար, որից 107.0 միլիոն ԱՄՆ դոլար 2015–2020թթ. համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ